**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԱՊՁԲ-21-9/17-8 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **24 -ը սեպտեմբերի 2021թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«ՋԻԱՐՁԻ» ՍՊԸ-ն,** ի դեմս տնօրեն **Է. Փոթոյանի,** ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **16.08.2021թ.** կնքված **№ ԳՀԱՊՁԲ-21-9/17-8** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.1 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

**2. Գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***9,694,000 (ինը միլիոն վեց հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,*** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ.:***

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ՋԻԱՐՁԻ» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Երևան, Արովյան փ./23 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Կոնվերսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144129 | Հ/Հ 19300391619700 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 02835324 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ | garg.llc@mail.ru |
| Ն. ՅՈԼՅԱՆ | Է. ՓՈԹՈՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-21-9/17-8 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/ | Մատակարարումը` 2021թ., 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան` 30.10.2021թ. |
|---|---|---|---|---|---|---|
| 8. | Էնօքսապարին (էնօքսապարինի նատրիումական աղ) | հատ | 3,000 | 1,470 | 4,410,000 | 3,000 |
| 17. | Դեքսամեթազոն dexamethasone | հատ | 2,000 | 729 | 1,458,000 | 2,000 |
| 21. | Կլարիթրոմիցին clarithromycin | հատ | 3,000 | 399 | 1,197,000 | 3,000 |
| 28. | Հակափայտացման անատոքսին | հատ | 160 | 900 | 144,000 | 160 |
| 54. | Ադեմետիոնին ademetionine | հատ | 500 | 2,990 | 1,495,000 | 500 |
| 56. | Դիոսմին, հեսպերիդին diosmin, hesperidin | հատ | 6,000 | 165 | 990,000 | 6,000 |
| Ընդամենը | | | | | 9,694,000 | |

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-21-9/17-8 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Չ/հ | CPV անվանում և ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին /ՀՀ դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ. |
|---|---|---|---|---|
| 8. | Էնօքսապարին b01ab05/Էնօքսապարին (էնօքսապարինի նատրիումական աղ)/ | 33621120/2 | 4,410,000 | 4,410,000 |
| 17. | Դեքսամեթազոն a01ac02, c05aa09, d07ab19, d07xb05, d10aa03, h02ab02, r01ad03, s01ba01, s01cb01, s02ba06, s03ba01/Դեքսամեթազոն dexamethasone/ | 33661153/2 | 1,458,000 | 1,458,000 |
| 21. | Կլարիթրոմիցին j01fa09/Կլարիթրոմիցին clarithromycin/ | 33651129/1 | 1,197,000 | 1,197,000 |
| 28. | Դիֆթերիայի և փայտացման (պրկախտի) դեմ պատվաստանյութեր/Հակափայտացման անատոքսին/ | 33651223/1 | 144,000 | 144,000 |
| 54. | Ադեմետիոնին - A16AA02/Ադեմետիոնին ademetionine/ | 33691198/1 | 1,495,000 | 1,495,000 |
| 56. | Դիոսմին, հեսպերիդին-C05CA53/Դիոսմին, հեսպերիդին diosmin, hesperidin/ | 33691212/1 | 990,000 | 990,000 |
| Ընդամենը | | | 9,694,000 | 9,694,000 |

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ք. Երևան Բագրևանդի 5<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011144129<br>ՀՎՀՀ 02522157<br>ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ | «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ<br>ք. Երևան, Արովյան փ./23<br>«Կոնվերսբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 1930039161970<br>ՀՎՀՀ 02835324<br>garg.llc@mail.ru |
| Ն. ՅՈՒԼՉՅԱՆ | Է. ՓՈԹՈՅԱՆ |

«ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ «ДЖИАРДЖИ» "GARG" 02835324